

ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԵՐԳԵՑԻԿ ԽՄԲԻ ՏԱՍՆՀԻՆԳԱՄՅԱԿԸ

Այս տարի լրացավ Մայր Տաճարի երգեցիկ խմբի կազմության 15-ամյակը։

1951 թվականին, հանգուցյալ Գևորգ Զ Կաթողիկոսի օրով, կազմվել էր Մայր Տաճարի երգչախումբը, 14 երգիչներից և երգչուհիներից բաղկացած։

Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի գահակալության 10 տարիների ընթացքում, որակապես և քանակապես զգալիորեն բարելավվեց երգչախմբի կազմը և այն դարձավ շնորհալի մի խումբ։ Ներկայումս Մայր Տաճարի երգչախումբը բաղկացած է մեծ մասամբ երաժշտական բարձր կրթություն ունեցող 35 երգիչներից և երգչուհիներից։

1961 թվականից երգեցիկ խմբի գեղարվեստական ղեկավարը և դիրիժորն է Հոգևոր Ճեմարանի նախկին սան և Երևանի կոնսերվատորիայի դիրիժորական բաժնի գերազանցիկ շրջանավարտ Խորեն Մելխանաջյանը։

Վերջին 5 տարիների ընթացքում երգչախումբը, իր շնորհալի ղեկավարի առաջնորդությամբ, կատարել է գնահատելի աշխատանք։ Ամբողջացվել և գեղարվեստական որոշ մակարդակի են հասցվել Եկմալյան և Կոմիտասյան պատարագները։

Եղեռնի հիսնամյակի առթիվ, երգեցիկ խումբը սովորեց և կատարեց խորին ապրումով Ալեքսանդր Հարությունյանի դաշնավորած «Գթա Տէր»-ը։

Մայր Աթոռի հանդիսություններին երգչախումբը հաճախ իր մասնակցությունն է բերում ժողովրդական երգերի բարձր կատարումով։

Շնորհավորելով Մայր Տաճարի երգչախմբի 15-ամյակը, ցանկանում ենք նրան աշխատանքային նոր հաջողություններ։